



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30877  
Յունիս 22, 1989

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ Քհնյ. Հազարեան  
Առժամեայ Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ  
Ծիգակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ստացած ենք Մայիս 7, 1989 թուակիր Եկեղեցոյդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Փետրուար 12-ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուեարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Պարգեւ Հիթիկ  
Նշան Պապիկեան  
Կարօ Էվրան  
Յակոբ Տիրիլէն